

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՎԱ-ԵՄԾՁԲ-23/1-1**

ք.Երևան

«09» Ֆեբրեար 2023թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վազգեն Պողոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ծանրամարտի Եվրոպայի առաջնության միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը հավաստող փաստաթուղթը (հավելված N 3.1), տվյալ փուլի շրջանակում մատուցված ծառայության տեխնիկական բնութագրում, միջոցառման կոնցեպտ/ բովանդակությունում և իրականացման ծրագրում սույն պայմանագրով սահմանված կարգով կատարված փոփոխությունների ամփոփումը ներառող համաձայնագրի նախագիծը և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

Ընդ որում, սույն պայմանագրի 4.2.1 կետում նշված յուրաքանչյուր փուլի շրջանակում մատուցվող ծառայությունների տեխնիկական բնութագրում, միջոցառման կոնցեպտ/ բովանդակությունում և իրականացման ծրագրում կատարվելիք փոփոխություններն արձանագրվում են հետևյալ եղանակով.

Փոփոխության նախաձեռնությամբ հանդես եկող կողմը սույն կետով նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեներին է ուղարկում առաջարկվող փոփոխության բովանդակությունը: Փոփոխությունը քննարկման արդյունքների վերաբերյալ տեղեկությունը տրամադրվում է էլեկտրոնային փոստի միջոցով ոչ ուշ քան վերոնշյալ փոփոխության առաջարկությունն ուղարկվելուն հաջորդող օրվա ժամը 18:00-ն: Սահմանված ժամկետում արձագանքի բացակայության դեպքում առաջարկությունը համարվում է մերժված:

Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեն է narine.shahbazyan@escs.am, Կատարողի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ info@background.am : Վերոնշյալ գրագրությունն իրականացվում է միայն սույն կետում նախատեսված էլեկտրոնային փոստերի միջոցով:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1160000000 (մեկ միլիարդ մեկ հարյուր վաթսույն միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը: Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում^{14.1}

4.2.1 Ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվելու են փուլային, հաշվետվությունների, ընդունման հանձնման արձանագրությունների և ակտերի հիման վրա, հետևյալ փուլերով.

Փուլեր	Մատուցված ծառայություն	Վճարվող տոկոսներ
I փուլ	Կնքված պայմանագրեր, բրենդավորում, գովազդային ծառայություններ, հյուրանոցների ամրագրում, առաջխաղացման ծառայություններ	Պայմանագրի արժեքի 20 տոկոսը
II փուլ	Տեղադրված ձայնային, լուսային և տեխնիկական սարքավորումներ, բեմահարթակ, տրանսպորտային միջոցների բրենդավորում, ֆան զոնայի ստեղծում	Պայմանագրի արժեքի 40 տոկոսը
III փուլ	Բացման արարողություն	Պայմանագրի արժեքի 30 տոկոսը
IV փուլ	Մրցաշարի ընթացք, փակում և ծառայությունների մատուցման պարտավորությունների ողջ ծավալով կատարում:	Պայմանագրի արժեքի 10 տոկոսը

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

Ընդ որում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում ներկայացված միջոցառման **կոնցեպտի/բովանդակության** բովանդակային պայմաններից շեղման յուրաքանչյուր դեպքի պարագայում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Շեղման պարագայում Կատարողը պետք է ապահովի համարժեք փոխարինում, ընդ որում՝ յուրաքանչյուր համարժեք փոխարինում նախապես պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:


Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է  էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042232
ՀՎՀՀ 002698732

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Բեգրաունդ Փրոդյաքշն» ՍՊԸ
Իր. հասցեն՝ ք. Երևան, Անտառային փ., 160/14 8.
Գործ. հասցեն՝ ք. Երևան, Խանջյան փ. 13/1
Հեռ.՝ (+374) 55-60-50-70
Էլ. Փոստ՝ info@background.am
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 16600559951800
ՀՎՀՀ 02676654

Գլխավոր քարտուղար՝



(ստորագրություն)

Շ. Հակոբյան

Կ.Տ.




Տնօրեն՝



(ստորագրություն)

Վ. Պողոսյան

Կ.Տ.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

« դրամ

Ծառայության								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	Ժամկետը**
1	92621110/1	Սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	2023 թվականի ապրիլին Երևանում կայանալիք ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի առաջնության անցկացման միջոցառումների կազմակերպման ծառայությունների տեխնիկական բնութագիրը՝ համաձայն Հավելված 1.1-ի:	դրամ	1160000000	1	ք. Երևան, Տեխնիկական բնութագրին համապատասխան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ Համաձայն Հավելված 1.1-ի

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

02698732

Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Վ. Պողոսյան

(ստորագրություն)



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-23-Ը ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Հակիրճ նկարագիր - 2023 թվականի ապրիլի 15-23-ը Երևանում անցկացվելիք ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի առաջնության կազմակերպման և անցկացման միջոցառում.

- Առաջնության նպատակը միջազգային հարթակներում Հայաստանն էլ ավելի ճանաչելի դարձնելն է, ինչը կխթանի.
- ծանրամարտ մարզաձևի զարգացմանը և մասսայականացմանը,
- արդյունքային ցուցանիշների բարձրացմանը,
- մրցանակային տեղերի գրավմանը, որը հնարավորություն կընձեռի հետագայում ևս նմանատիպ միջոցառումների անցկացումը Հայաստանի Հանրապետությունում:
- Նախատեսվում է առաջնությունն անցկացնել Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, ուստի առաջարկները կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել թե՛ նրա մասշտաբայնությունը, թե՛ այն հանրայնացնելու լուծումները:
- Համաձայն ծանրամարտի միջազգային կանոնակարգի, առաջնության կազմակերպման շրջանակներում անհրաժեշտ է նախատեսել.

1.Առաջնության բացման և փակման արարողության կազմակերպում և անցկացում, համերգային ծրագրի ստեղծում, հաղորդավարի ծառայություն:

Առաջնության բացման արարողությունը տեղի է ունենալու մրցումային դահլիճում մեկ ժամ տևողությամբ: Համերգային շոու ծրագրով, 43 անդամ երկրների դրոշներով շքերթ: Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում 14.04.2023թ.-ին:

Փակման արարողությունը ենթադրվում է իրականացնել այլ ռեստորանային դահլիճում, մրցանակաբաշխումով, փոքր համերգային ծրագրով, ընթրիքի կազմակերպում երեք տաք ուտեստով: Փակման արարողությունը նախատեսված է 250 անձի համար:

2.Տեխնիկական հագեցվածության ապահովում (LED էկրաններ, ձայնային և լուսային համակարգերի ապահովում, դահլիճի համապատասխանեցում):

Սահմանային պատ/կառույց, ամբիոնի հետևում, նվազագույնը 12x7 մետր, լույս կլանող նյութ/ծածկույթ կամ LED վահանակ: LED վահանակ «ներսի», «սև դիող», առավելագույնը P4, նվազագույնը 120 քառակուսի: Մարզիկների ներկայացման թունելը (մրցույթի ամբիոնի մի կողմում) իրականացվում է «փակ», «սև դիող», P4 LED վահանակով: Մրցման դահլիճում Համամասնական հեռուստատեսային ազդանշանի, ինչպես նաև ընթացիկ մրցույթի արտիո ազդանշանի վերարտադրումը լուսադիողային էկրանով, առավելագույնը P4, առնվազն 6 մետր լայնությամբ

Մարզահամալիրի վարձակալության ծառայություն (ներառյալ՝ օդափոխություն և ջեռուցում):

3.Տրանսպորտային ծառայություններ (ավտոբուս, միկրոավտոբուս, մինիվեն, VIP-սեղան):

Ավտոբուսներ 8 հատ:

Ավտոբուսը պետք է լինի՝ 30-50 տեղանոց, տարեթիվը՝ 2010-2022թ.

Միկրոավտոբուս 10 հատ:

Միկրոավտոբուսը պետք է լինի՝ 15-18 տեղանոց, տարեթիվը՝ 2011-2022թթ.

Ավտոբուսների և միկրոավտոբուսների դիմապակիների վրա գրված լինի «2023 EUROPEAN SENIOR WEIGHTLIFTING CHAMPIONSHIPS YEREVAN, ARMENIA» և միջոցառման լոգոն:

Սեդաններ 4 հատ բիզնես դասի սեդան /տարեթիվը 2018-2022թթ./.

4.Սպասարկման այլ ծառայություններ (դիմավորելու և ճանապարհելու ծառայություններ):

Բոլոր մասնակիցների դիմավորում /1000 անձ/ (պատվիրակություններ, մրցավարներ, մարզիկներ, մարզիչներ, սպասարկող անձնակազմ և այլն): Դիմավորել մասկոտի և կամավորների (10 հոգի) ներկայությամբ, Զվարթնոց օդանավակայանում պետք է տեղադրել միջոցառման հատուկ տեղեկատվական վահանակ: (Վահանակը ըստ միջոցառման բրենդինգի)

5.Բրենդավորում, գովազդային ծառայություններ, անիմացիա, տեսանյութերի պատրաստում, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի նախասրահի ղեկորատիվ ձևավորում, տոմսերի բրենդավորում և վաճառք:

Տարբերանշանի (լոգո) վրա պետք է պատկերված լինի ծանրամարտի ծանրաձող, լոգոյի մեջ պետք է գրված լինի «2023 EUROPEAN SENIOR WEIGHTLIFTING CHAMPIONSHIPS YEREVAN, ARMENIA» և EWF բառերը:

Լոգոն պատրաստված լինի բարձ որակի, ունանա 3D տարբերակ: Երևան քաղաքում և որոշ մարզերում պետք է տեղադրվի գովազդային վահանակներ /համաձայնեցվի պատվիրատու հետ/:

Հյուսիսային պողոտայի ճեմուղում պետք է երկկողմանի տեղադրված լինի՝ Հայաստանի Հանրապետության, Հայաստանի ծանրամարտի (լոգոն (դրոշի տարբերակով)), Երևան մայրաքաղաքի, ծանրամարտի միջազգային և ծանրամարտի Եվրոպայի դրոշներով:

Հյուսիսային պողոտայում տեղադրված լինի հետհաշվարկային վահանակ՝ վահանակը պատրաստված լինի մետաղյա և պլաստիկ կոնստրուկցիայից: Վահանակի վրա նշված լինի՝ օր, ամիս և տարի: Բացման օրը պատվավոր մեկնարկի բացման կոճակ՝ մեկանգամյա օգտագործման, տակդիրը գլանաձև պլաստիկից, սպիտակ գույնի, կարմիր կոճակով:

Տեսքը՝ միջոցառման խորհրդանիշը (մասկոտը) ծանրամարտի ծանրաձողը երկու ձեռքով գլխի վերևում պահած, որը լինի 2մ բարձրությամբ մետաղյա և պլաստիկ կոստրուկցիայից, ծանրաձողի քարերի վրա գրված լինի ELEIKO և քարերի գունային համադրությունը ըստ ՀՀ եռագույնի՝ կարմիր, կապույտ և նարնջագույն, կողքը տեղադրված լինի հետհաշվարկային վահանակը պլաստիկ կոնստրուկցիայից իսկ տակդիրը մետաղյա հումքից: Վահանակի մեջ էլեկտրոնային ժամացույց, վրան գրված լինի ՀՀ վարչապետի աշխատակազմ (GOV) «2023 EUROPEAN SENIOR WEIGHTLIFTING CHAMPIONSHIPS YEREVAN, ARMENIA» և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն բառերը, պատկերված լինի՝ Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիայի, ELEIKO, EWF, IWF, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի և Երևանի քաղաքապետարանի և հովանավորների լոգոները: (Բոլոր լոգոները կտրամադրի պատվիրատուն):

Հետհաշվարկային վահանակը ունանա գիշերային լուսավորվածություն: (Գունային համադրությունը քննարկել Պատվիրատուի հետ:)

Տեսանյութերը լինեն 3 րոպե տևողությամբ, Հայաստանի ծանրամարտի պատմության վերաբերյալ, Հայաստանի պատմության, տեսարժան վայրերի և հայ հայտնիների մասին:

Տոմսերի վաճառքը պետք է կազմակերպվի առնվազն երեք օպերատորի միջոցով:

Տոմսերը պետք է տպագրվեն ըստ միջոցառման բրենդավորման և վաճառքը պետք է կազմակերպվին մասնակց կողմից:

Տոմսերի վաճառքից ստացված եկամուտի և ծախսերի տարբերությունը բաշխվում է հետևյալ համամասնությամբ

90% - Պատվիրատուին: Ընդ որում գումարը փոխանցվում է անկանխիկ, միջոցառումը ավարտելուց հետո 10 աշխատանքային օրում Պատվիրատուի տրամադրած հաշվեհամարին փոխանցելու միջոցով

10%-Կատարողին:

Յուրաքանչյուր մրցակցային օր Հայաստանի Կառավարությանը տրամադրվում է VIP տրիբունայի 100 հրավիրատուն, ԿԳՄՍ նախարարությանը VIP 30 հրավիրատուն, իսկ Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիային՝ մարզադպրոցների համար հատկացված տրիբունայի 100 տոմս:

Վաճառքի ենթակա տոմսերի առավելագույն քանակները և արժեքները՝ ըստ տեղերի կտրամադրի Պատվիրատուն, Պայմանագիրը կնքելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

6.Սոցիալական ցանցերում ռազմավարական կոնցեպտի մշակում և իրականացում, սոցիալական ցանցերի՝ facebook, instagram, tiktok էջերի կառավարում և առաջխաղացում:

Սոցիալական ցանցերում պետք է տեղադրվեն գովազդներ Երևանում անցկացվող ծանրամարտի Եվրոպայի առաջնության վերաբերյալ, գովազդում նշված լինի առաջնության օրը, ժամը և վայրը: Գովազդում ներկայացվի մասնակից հայ ծանրորդների նկարները:

Գովազդը տարածվի ամբողջ ՀՀ տարածքով:

7. Համագումարի կազմակերպման ծառայություններ (դահլիճի վարձակալություն առնվազն 150 անձի համար, համընթաց թարգմանչական ծառայություններ, սննդի սպասարկման ծառայություններ և այլն):

Համագումարի դահլիճը պետք է լինի հինգ աստղանի հյուրանոցում: Նախատեսված լինի 150 անձի համար, բանկետ 150 անձի համար 1 անգամ (քաղցրավենիք, միրգ, աղցան, քազավորված ըմպելիք, բնական հյութ, խմիչք՝ կոնյակ (առնվազն 10 տարվա), գինի, անուշեղեն):

Տեխնիկական հագեցվածություն՝ բարձրախոս, խոսափող, պրոեկտոր, համընթաց թարգմանության համար հատուկ սարքավորումներ:

43 անդամ երկրների ցուցանակներ:

8. Թարգմանչական ծառայություններ:

Ծանրամարտի Եվրոպայի ֆեդերացիայի համագումարի, բացման և փակման արարողությանների ժամանակ անգլերենի և ռուսերենի գերազանց իմացությամբ համընթաց թարգմանիչների ապահովում (2 հոգի):

9. Հուշանվերների, շապիկների, սրբիչների, մասկոտի փափուկ խաղալիքի և հավատարմագրերի պատրաստում:

Հուշանվերներ 20 հատ- հուշանվերները պետք է պատրաստված լինեն առնվազն 5 սմ հաստությամբ, 30 սմ բարձրությամբ և 10 սմ լայնությամբ 3D ապակուց կամ բրոնզից՝ վրան լազերային տպագրությամբ): Հուշանվերներն ունենան տուփեր:

Հուշանվերների վրայի գրված տեքստը (ըստ միջոցառման անվանման և ըստ միջոցառման տարբերանշանի):

Շապիկներ- Սպորտային շապիկը պետք է պատրաստված լինի՝ տրիկոտաժե կտորից, բաղադրությունը՝ 100% բամբակից: Օձիքը շրջանաձև:

Շապիկի վրա լինի՝ միջոցառման լոգոն «2023 EUROPEAN SENIOR WEIGHTLIFTING CHAMPIONSHIPS YEREVAN, ARMENIA» բառերը տպագրված:

Ընդհանուր՝ 1000 հատ սպորտային շապիկ. քանակից՝ XS չափսի-70 հատ, S չափսի - 160 հատ, M չափսի - 220 հատ, L չափսի -260 հատ, XL չափսի 110 հատ, XXL չափսի - 100 հատ, XXXL չափսի - 70 հատ XXXL-10 հատ:

Սրբիչներ – ընդհանուր 550 հատ:

Սրբիչի բաղադրությունը՝ 100% բամբակ, չափսը՝ 140×75, խտությունը՝ 550գ, գույնը՝ սև, վրան 2023 EUROPEAN SENIOR WEIGHTLIFTING CHAMPIONSHIPS YEREVAN, ARMENIA» գործվածքով՝ մոխրագույն:

Մասկոտի փափուկ խաղալիք

Մասկոտի փափուկ խաղալիք (ծանրաձողով) 750 հատ

Փափուկ խաղալիքը պատրաստված լինի ոչ թունավոր նյութեր պարունակող կտորներից՝ պոլիեսթեր, պլյուշ, բարձրությունը՝ 20սմ, լայնքը՝ 10-ից 15սմ, լցունած՝ սինտիպոնով, շարժական ձեռքերով, ձեռքրի մեջ ծանրաձող, ծանրաձողը լինի թունաքիմիկատներ չպարունակող պլաստիկից կամ փայտե: Խաղալիք մասկոտն ունենա հագուստ որի վրա լինի միջոցառման լոգոն և ասեղնագերծած «2023 EUROPEAN SENIOR WEIGHTLIFTING CHAMPIONSHIPS YEREVAN, ARMENIA» բառերը:

Հավատարմագրեր - Ընդհանուր՝ 1000 հատ: Միջոցառման լոգոտիպով, A3 չափի, կենտրոնական հատվածում գրված լինի «EUROPEAN SENIOR WEIGHTLIFTING CHAMPIONSHIPS YEREVAN, ARMENIA APRIL 2023», վերևի ձախ և աջ անկյուններում պատերված լինի Ծանրամարտի Եվրոպայի ֆեդերացիայի և միջոցառման լոգոտիպերը, ներքևի ձախ անկյունում գրված լինի՝ EUROPEAN WEIGHTLIFTING FEDERATION բառերը, որի տակ գրված լինի ծանրամարտի Եվրոպայի ֆեդերացիայի նախագահի (PRESIDENT) և գլխավոր քարտուղարի (GENERAL SECRETARY) ստորագրության տողը, իսկ աջ անկյունում՝ ARMENIAN WEIGHTLIFTING FEDERATION բառերը, որի տակ գրված լինի ծանրամարտի Եվրոպայի ֆեդերացիայի նախագահի (PRESIDENT) և գլխավոր քարտուղարի (GENERAL SECRETARY) ստորագրության տողը:

A3 չափսի ներքևի հատվածում Հայաստանի պատմության մասին հակիրճ նկարագրություն անգլերեն լեզվով: Հավատարմագրի կենտրոնում լինի Հայաստանը խորհրդանշող նկար:

Գունային համադրությունը քննարկել Պատվիրատուի հետ:

Տեղադրել ELEIKO բրենդի տաղավարներ միջոցառման դահլիճի նախասրահում, օդանավակայանի DutyFree սրահներում, ֆան զոնայում, միջոցառման համար նախատեսված հուշանվերների վաճառքի համար:

Վաճառքից ստացված եկամուտի և ծախսերի տարբերությունը բաշխվում է հետևյալ համամասնությամբ

10%-Պատվիրատուին: Ընդ որում գումարը փոխանցվում է անկանխիկ, միջոցառումը ավարտելուց հետո 10 աշխատանքային օրում Պատվիրատուի տրամադրած հաշվեհամարին փոխանցելու միջոցով

90%-Կատարողին

10. Նկարահանման և ուղիղ հեռարձակման ապահովման ծառայություններ (աշխատանքային կայան մոնիտորով, 4K 16-րդ, ՍԽՍՏ, ՍՆԳ, 3Ջեյս, 2xSteadyCam, բարձր արագությամբ ինտերնետ կապուղու ծառայություն, անխափան սնուցման գեներատոր):

14 տեսախցիկի համակարգ 4K, 4:4:4, 2/3 CMOS, B4 սպինյակի ամրացում, ներառյալ SteadyCam ստուդիան և ռադիոալիքով հեռարձակման տեսախցիկներ, 1 տեսախցիկի համակարգ Ultra Slow Motion մինչև 1000 կադր վայրկյանում, 1 տեսախցիկ ծայրահեղ շարժական 4K համակարգ, կայունացուցիչով և ռադիոալիքով, 1 Mōvie BIRD ST30 տեխնո-կոունկ կամ համարժեք, Mōvi XL տիպի կայունացմամբ, Տարբեր խոշորացումների հեռաֆոտո ուսպնյակներ (100-ից մինչև 45) CANON CANON լայնանկյուն ուսպնյակներ, Riedel բազմալիք կապի համակարգ (լարային և անլար) կամ համարժեք, ձայնագրում 64 Dolby 5.1 ալիքով, Գրաֆիկական դիզայնի համակարգ Chyron Prime Premium:

Բացման արարողության նկարահանում 14.04.2023թ. մեկ ժամ տևողությամբ

Յուրաքանչյուր մրցակցային օր 15-23 ապրիլի 2023 թ. նկարահանման և ուղիղ եթերի հեռարձակման ապահովում՝ A խմբի 4-5 քաշային կարգը 8-10 ժամ ամբողջական նկարահանում և B խմբի 4-5 քաշային կարգը 8-10 ժամ հեռարձակում մեկ տեսախցիկով /սթրիմինգ/:

Մնացած խմբերը նկարահանվում են մեկ տեսախցիկով և ուղիղ եթեր չի հեռարձակվելու:

30 վարկյան տևողությամբ տեսահոլովակի ստեղծում, ուղիղ եթերից առաջ ցուցադրելու համար:

Բոլոր նկարված տեսանյութերի հեղինակային իրավունքը պատկանում է Ծանրամարտի Եվրոպայի ֆեդերացիային:

11. Հյուրանոցային ծառայություն :

Հյուրանոցային ծառայություն 70 անձի համար, մինչև 15 օր տևողությամբ (մրցավարների, հատուկ հյուրերի և միջոցառման օտարերկրյա սպասարկող անձնակազմի համար 5 աստղանի մեկ հյուրանոցի ապահովում, 3 անգամյա սննդով, յուրաքանչյուրին պետք է տրամադրվի առանձին հյուրանոցային համար): Սենյակների քանակը՝ 70 հատ: (Ըստ միջազգային և Եվրոպայի ծանրամարտի ֆեդերացիայի կանոնակարգի հյուրերի տեղավորումը պետք է լինեն մեկ տեղանոց համարներում) (check in, check out հյուրերի տեղավորումը՝ ըստ ավիատոմսերի թռիչքների ժամականակացույցի, որը կտրամադրի պատվիրատուն) (EWF President 01 x Suite x 13 nights from 10.04.2023; EWF Gen. Sec. 01 x Suite x 13 nights from 10.04.2023; EWF Treasurer 01 x Single room x 13 nights from 10.04.2023; Assist. to President 01 x Single room x 13 nights from 10.04.2023; Assist. to the Gen. Sec. 01 x Single room x 13 nights from 10.04.2023; EWF Executive Board 09 x Single rooms x 3 nights from 10.04.2023; Committ. Chairper. 04 x Single rooms x 2 nights from 10.04.2023; Technical Officials 40 x Single rooms x 11 nights from 12.04.2023; Anti-Doping Controllers 04 x Single rooms x 11 nights from 12.04.2023; EWF's VIP 04 x Single rooms x 13 nights from 10.04.2023; EasyLifting staff 05 x Single rooms x 13 nights from 10.04.2023; Invited Journalist 02 x Single rooms x 13 nights from 10.04.2023; Invited media director 01 x Single rooms x 13 nights from 10.04.2023; IWF President 01 x Suite x 13 nights from 10.04.2023; IWF Gen. Sec. 01 x Suite x 13 nights from 10.04.2023; Armneina Federation's VIP 10 x Single room x 13 nights from 10.04.2023 (10 հոգի հրավիրվելու են ՀՀ ծանրամարտի ֆեդերացիայի կողմից), միջազգային լրագրողներ՝ 3 հոգի 11 օր):

12. Սննդով ապահովում ողջ միջոցառման ընթացքում (մասնակից մարզիկներին և կամավորներին «Լանչ բոքս»-երով սննդի ապահովում)

2023 թվականի ապրիլի 15-ից 23-ն ընկած ժամանակահատվածում ապահովվել վերոնշյալ անձանց սնունդը օրը 2 անգամ: «Լանչ բոքս»-ը նախատեսված լինի 550 անձի համար:

13. Հատուկ հյուրերի համար նախատեսված դահլիճի կահավորում:

Նախատեսվում է 30 հոգու համար:

Բազմոցներ, բազկաթոռներ, ֆուրշետ սեղան (մրգեր, անուշեղեն քաղցրավենիք, ըմպելիք, ալկոհոլային խմիչքներ, սուրճ, թեյ և ուտեստներ):

14. Մրցումային և մարզումային դահլիճներում սառնարանի և ջրի ապահովում :

Մարզումային և մրցումային դահլիճներում 2-ական սառնարաններ սառույցի առկայությամբ, և ջուր մասնակիցների թվի եռապատիկով: Օրական՝ 1000 շիշ 0.5լ, տարողությամբ, 9 օր ընդհանուր՝ 9000 շիշ:

15. Մրցումային և մարզումային դահլիճների և բեմի կահավորման ծառայություն:

Scenius Profile 1400w կամ համարժեք, AXCOR 300 կամ համարժեք, Vari Lite 3000 Wash շարժական գլուխ 5600K կամ համարժեք, LED Wash A.leda B-EYE K20 կամ համարժեք, փոթորիկ ստրոբո կամ համարժեք, մառախուղի մեքենա MDG CO2 կամ համարժեք, ձայնային ձևավորում (ներառյալ հեղինակային իրավունքը), երկու հաղորդավար, մեկ դիջեյ: Լույսը ներծծող գորգ մուգ և չեզոք գույներով, որը ծածկում է մրցութային ողջ տարածքը:

Լույսը ներծծող գորգ մուգ և չեզոք գույներով, որը ծածկում է մրցութային ողջ տարածքը: Սահմանային պատ/կառույց, ամբիոնի հետևում, նվազագույնը 12x7 մետր, լույս կլանող նյութ/ծածկույթ կամ LED վահանակ: LED վահանակ «ներսի», «սև դիոդ», առավելագույնը P4, նվազագույնը 120 քառակուսի: Մարզիկների ներկայացման թունելը (մրցույթի ամբիոնի մի կողմում) իրականացվում է «փակ», «սև դիոդ», P4 LED վահանակով:

Բլոգի յուրաքանչյուր տող նախատեսված է SS ոլորտի 10 աշխատակիցների (էլեկտրական և ինտերնետ վարդակներ) աշխատանքի համար: Փափուկ աթոռներ, սև թափոնների զամբյուղներ: Մրցույթի ամբիոնի մի կողմում աշխատանքային սեղանների երկու շարքերը լուսավորված են հեռուստացույցի համար արձանագրության համաձայն: LAN և SDI մալուխների միացում LED վահանակի սերվերին մրցութային ամբիոնի մի կողմի աշխատասեղանների առաջին շարքից: Գիզաբիթ ինտերնետ ալիք. Ձայնային դիզայն. Լույսը կլանող գորգ մուգ և չեզոք գույներով՝ ծածկելու ամբողջ տաքացման տարածքը: Կառուցել 11 անհատական հանգստի խցիկներ՝ մերսման սեղաններով անմիջապես նախավարժանքի հարթակի հետևում, նվազագույնը 3x2 մ: Կառուցել 11 հարթակների շուրջ պատնեշ միմյանցից անջատ, որը լինի առնվազն 5x4մ իսկ բարձրությունը 2մ (պատնեշը պետք ունենա երեք կողմ, դիմացի հատվածը բաց), իսկ նախավարժանքի յուրաքանչյուր հարթակների աջ և ձախ կողմերում տեղադրված լինի՝ 4 նստարան և 1 պահոց: Յուրաքանչյուր 11 պատնեշների վրա փակցված լինի հեռուստացույց կամ LED էկրան: Ներկառուցված հեռուստացույց կամ LED վահանակ՝ վիդեո ազդանշան/ազդանշաններ նվազարկելու համար: Անհատական/մասնավոր խցիկների և լավ սարքավորված տաքացման հարթակների նյութերը և/կամ ծածկույթը պատրաստված են հեռուստացույցի համար հարմար արձանագրության համաձայն (լույս կլանող նյութ/ծածկույթ): Առաստաղի ժամանակավոր կառուցում լուսավորությամբ՝ ստուդիայի մթնոլորտ ստեղծելու համար՝ համաձայն հեռուստատեսային հեռարձակման արձանագրության: Մարզահրապարակ, Համամասնական հեռուստատեսային ազդանշանի, ինչպես նաև ընթացիկ մրցույթի աուդիո ազդանշանի վերարտադրումը լուսադիոդային էկրանով, առավելագույնը P4, առնվազն 6 մետր լայնությամբ:

Մրցութային տարածք Մրցույթի ամբիոնի բեմական/թատերական լուսավորություն 10 x 10 մետր՝ կախովի ֆերմերների/կառուցվածքների միջոցով: Բավարար լուսավորության սարքավորումներ Clay Packy կամ համարժեք. Մրցման և մարզումային դահլիճները պետք է հագեցված լինեն գորգերով /ковролит/: Դահլիճի առաստաղին ամրացված լինի 43 երկների դրոշները՝ 2x4մ չափսի: (Մասնակից երկների ցուցակը կտրամադրի պատվիրատուն)

16. Պահեստային գեներատորի՝ անխափան սնուցման սարքի ապահովում, առնվազն 100 Կվա:

17. Մամուլի ասուլիս:

Մամուլի ասուլիսի դահլիճը պետք է կահավորված լինի՝ բազկաթոռ՝ 5 հատ, աթոռ 30 հատ:

Կազմակերպել մամուլի ասուլիս 2 անգամ.

1. Ասուլիսը պետք է տեղի ունենա՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում միջոցառման մեկնարկից 4 օր առաջ (ապրիլի 11-ին), նախատեսված՝ 5 անձ (հատուկ հյուրեր) և 20-25 լրագրողներ,
2. Միջոցառման ավարտից 2 օր հետո (ապրիլի 25-ին), նախատեսված՝ 3 անձ (հատուկ հյուրեր) և 20-25 լրագրողներ:

18. Ֆան զոնայի ստեղծում:

Կարապի լճի հարակից տարածքում տեղադրել միջոցառման բաներներ (միջոցառման բրենդինգի) «EUROPEAN SENIOR WEIGHTLIFTING CHAMPIONSHIPS YEREVAN, ARMENIA APRIL 2023» բառերով, արհեստական ծանրածող՝ արհեստական լիցքավորած քաշով (պլաստիկից), արհեստական հարթակով (որպեզի մարդիկ կարողանան արհեստական ծանրածողը բարձրացնեն և նկարվեն և այլն): Մասկոտի (դերասանի) ծառայություն 2023 թվականի ապրիլի 10-ից 23-ը:

19. Ֆիլմի ստեղծում:

Մեկ ֆիլմի ստեղծումն իր մեջ ենադրում է՝ միջոցառման նախապատրաստական ընթացքը, մարիզիկների նախապատրաստական մարզումները, բուն միջոցառման ընթացքը և վերջնական արդյուքների ամփոփումը: Ֆիլմի տևողությունը՝ 15 րոպե: Ֆիլմի տրամադրման վերջնաժամկետը՝ 02.05.2023թ.:

